ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱ-
ԿԻՑՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## «ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ» ԲՐՈՇՈՒՐԻ ՇՈՒՐՋԸ

07
Մ-45

„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1940

14907

Պատ. խմբագիր՝ Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Թարգմանիչ՝ Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ
Սրբագրիչներ՝ Ս. ԲԱԼԱԲԱՆՅԱՆ,
Ա. ՅԵՐԻՑՅԱՆ

ՎՖ 677
Պատ. № 676. տիրաժ 1850

Հայկական ՍՍՀ ԺԿԽ-ին կից թերթերի և ամսագրերի տպարան, Յերևան

23 JUN 2009
01
Մ-45

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## «ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ» ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

*Պատի թերթերի խմբագիրների ու բանթղթակիցների դասընթացների ունկնդիրների համար ուղարկելով* «Պատի թերթի աշխատանքի կազմակերպումը» *բրոշյուրը, դասընթացների խմբագրությունը թերթերի խմբագրություններին և կոնսուլտանտներին խորհուրդ է տալիս՝ ունկնդիրների հետ չորս պարապմունք անցկացնել ըստ այդ բրոշյուրի։*

## ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

*Բաժանելով այդ բրոշյուրն ունկնդիրների մեջ, ուղարկեցեք նրանց առաջիկա պա-*

26.06.2013

րապմունքների (կոնսուլտացիաների) օրացուցային պլանը:

Սովորողներին խորհուրդ տվեք, որ նրանք նախ կարդան ամբողջ բրոշյուրը և ապա ձեռնամուխ լինեն նրա յուրաքանչյուր գլխի ուսումնասիրմանն առանձին։

Նրանց խորհուրդ տվեք նաև կարդալ բրոշյուրը բարձր ձայնով, խմբովին, իրենց խմբկոմի շրջանում, բանթղթակիցների, գյուղթղթակիցների մեջ: Նրանք այդ բանը կարող են անել դեռ առաջին կոնսուլտացիայից առաջ, որպեսզի պարապմունքներին գան՝ նախապես մտածած լինելով հարցերի վրա, գործադրելով բրոշյուրում տրված մի քանի խորհուրդներ, ինչպես նաև հավաքած լինելով անհրաժեշտ նյութեր, այն է՝ պատի թերթերի վերջին համարները, առաջիկա համարների պլանները և այլն։

Ռմկնդիրներին նախազգուշացրեք, որ բրոշյուրներն ուսումնասիրելու նպատակն է՝ գործնականորեն կիրառել նրանց մեջ պարունակվող ցուցումները պատի թերթի խմբկոմի աշխատանքում և, ուսումնասիրումը ոչ մի դեպքում չպետք է դառնա առանձին ձևակերպումների անգիր անելը։

Առաջին պարապմունքից առաջ և հետո ինքներդ ստուգեցեք (գրույց ունենալով մի քանի ընկերների հետ), թե ռմկնդիրներն ինչպես են ուսումնասիրում բրոշյուրը:



## ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ (ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐԻ) ԹԵՄԱՆԵՐԸ

«Պատի թերթի աշխատանքի կազմակերպումը» բրոշյուրն անցեք յերկու ամսվա ընթացքում (ամիսը յերկու կոնսուլտացիա)։

Առաջին կոնսուլտացիան՝ «Պատի թերթը որպես սոցիալիստական շինարարության գործիք»:

Յերկրորդ կոնսուլտացիան՝ «Պատի թերթի խմբկոմի աշխատանքը»:

Յերրորդ կոնսուլտացիան՝ «Պատի թերթի խմբկոմի աշխատանքը» (շարունակություն)։

Չորրորդ կոնսուլտացիան՝ «Պատի թերթի խմբագրումը»:

Առանց սահմանափակվելու բրոշյուրի հետ պարապմունքների որացուցային պլանն ուղարկելով, նախապես, յուրաքանչյուր կոնսուլտացիայից առաջ, ունկնդիրներին հիշեցրեք հերթական յենթաթեման, նրա բնույթը և անցկացնելու կարգը։

## ԱՌԱՋԻՆ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ

Նախքան այս կոնսուլտացիան անցկացնելը, կոնսուլտանտն ինքը պետք է կարդացած լինի Լենինի և Ստալինի հետևյալ աշխատությունները, վորոնք հիշատակված են բրոշյուրի տեքստում՝ «Խորհրդային Իշխանության հերթական խնդիրները» հոդվածի սկզբնական ուրվագիծը» (Լենին, Յերկերի ժողովածու, հատ. 22, եջ 412—417, գլուխ 10), «Մեր թերթերի բնույթի մասին» (Լենին, Յերկերի ժողով. հատ. 23, եջ 212—214), «Մամուլը վորպես կոլեկտիվ կազմակերպիչ» (Ստալին), «Քանի ավելի խորանաս անտառի մեջ...» (Ստալին), «Ինքնաքննադատության լոզունգի գռեհկացման դեմ» (Ստալին)։



Ընկեր Ստալինի վերոհիշյալ ստեղծագործությունները կարելի յե գտնել այն ժողովածուներում, վորոնք պարունակում են մամուլի մասին Լենինի և Ստալինի արտահայտած մտքերը։

Կոնսուլտացիայի ժամանակ ղեկավարը, ունկնդիրների հետ զրույց ունենալիս, պետք է պարզի, թե նրանք ինչպես են յուրացրել լենինյան-ստալինյան հիմնական ցուցումները բոլշևիկյան մամուլի կուսակցականության մասին, կուսակցության կողմից մամուլը ղեկավարելու մասին, թերթի, վորպես կոլեկտիվ ագիտատորի, պրոպագանդիստի և կազմակերպչի մասին, այն դերի մասին, վոր կատարում է թերթը սոցիալիստական շինարարության մեջ, սոցիալիստական մրցության ծավալման, ստախանովյան շարժման, քննադատության և ինքնաքննադատության ասպարեզներում։

Ունկնդիրների ուշադրությունը սրեցեք

հատկապես այն խնդիրների վրա, վորն ունի մամուլը ստախանովյան աշխատանքի օրինակները պրոպագանդա անելու, նոր նվաճումները ցույց տալու ասպարիզում։ Ընդսմին պետք է վոր պարապմունքի ղեկավարը, նախապես ծանոթանալով յերկու-յերեք պատի թերթերի հետ, ընդհանուր դրույթներն ամրացնի աչքի անցկացված պատի թերթերի պրակտիկայից վերցրած օրինակներով (դրական և բացասական)։

Զրույցից առաջ ցանկալի յե, վոր թերթում (շրջանային, բազմատիրաժ) մամուլի տեսություն տրվի այդ թեմայի շուրջը, վերլուծելով մի պատի թերթ։ Կոնսուլտացիայից վորոշ ժամանակ անցնելուց հետո, հարկավոր է վերադառնալ այդ հարցին։ Դրա համար պետք է հրապարակել պատի թերթերի մի քանի տեսություններ և հետևյալ թեմաներով՝ «Պատի թերթը սոցիալիստական մրցության մեջ», «Պատի թերթը և նրա օգնությունը բազմադազգահավորներին, չեֆրեմովականներին, հարյուրփութականներին, անասնաբուծական ֆերմաներին», «Քննադատության վոճը պատի թերթում» և այլն։

Կոնսուլտացիան պետք է ամրացնել առանձին հարցերի շուրջը պատի թերթի աշխատողների հետ գումարված ընթացիկ օպերատիվ խորհրդակցություններով, տալ բանավոր տեսություններ, գրավոր գրախոսականներ ուղարկել խմբկոլներին՝ նրանց պատի թերթերի մասին ։

Թերթի, վորպես սոցիալիստական շինարարության գործիքի, դերը պարզելն ամբողջ առաջին կոնսուլտացիայի կենտրոնական մոմենտն է։ Այդ պատճառով կոնսուլտանտը ունկնդիրների հետ իր ունեցած զրույցը պետք է կառուցի այնպես, վոր նրանք վորքան կարելի յե ավելի լրիվ ու պարզորոշ կերպով յուրացնեն այդ հիմնական գաղափարը։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ

Այս կոնսուլտացիան նվիրվում է բրոշյուրի այն մասին (եջ 27—40), վորի մեջ ասված է, թե ինչպես է ստեղծվում խմբկոլը, ինչպես են բաշխվում պարտականությունները խմբկոլների անդամների միջև և ինչպես են կազմվում պատի թերթերի պլանները։

Առաջիկա գրույցի ղեկավարը, պատրաստվելով այդ կոնսուլտացիային, նախապես պետք է բնտրությամբ վերցնի յերկու-յերեք խմբկոլ և մանրամասնորեն ծանոթանա նրանց մեջ կատարվող աշխատանքի կազմակերպմանը:

Գտնելով այնպիսի մի խմբկոլ, վորի մեջ աշխատանքի բաշխումն ավելի կամ պակաս չափով համապատասխանում է բրոշյուրի ցուցումներին, նրա կողքին պետք է ցույց տալ այնպիսի մի խմբկոլ, վորտեղ գործի կազմակերպական կողմը վատ հիմքի վրա յե դրված և այդ պատճառով ինքը պատի թերթը թույլ է։ Կոնսուլտանտի խնդիրն է՝



համոզել ունկնդիրներին, վոր անհրաժեշտ է հստակորեն կազմակերպել խմբկոլի աշխատանքը։

Յերկրորդ կոնսուլտացիայի թեմայի շուրջը կատարվող աշխատանքում կարևորագույն տեղ պետք է գրավի պլանի հարցը։ Պարապմունքի ղեկավարը լավ արած կլինի, յեթե նախապես կազմելով պատի թերթի լավ պլանի նախագիծ, ունկնդիրներին ցույց տա պլան կազմելու մեթոդիկան, շաղկապելով այդ բանը բրոշյուրի համապատասխան ցուցումների հետ (պլանին վերաբերող գլխում)։

Խորհուրդ ենք տալիս պարապմունքի ժամանակ ցույց տալ, թե ինչպես է պլանավորում իր աշխատանքը շրջանային թերթի (բազմատիրաժ թերթի) խմբագրությունը:

Ղեկավարը ձեռքի տակ պետք է ունենա խմբկոլների պլանները: Այդ դեպքում կոնսուլտանտը, պարապմունքից առաջ արտատպելով յերկու-յերեք հաջող ու անհաջող

պլաններ, կարող եր բաժանել դրանք ուն-կընդիրներին և ապա գրույցի ընթացքում վերլուծել այդ պլանները, ցույց տալ դրանց արժանիքներն ու թերությունները։

Յերկրորդ կոնսուլտացիան անպայման պետք է անցկացնի թերթի խմբագիրն ինքը, վորը խմբագրության մյուս աշխատակից-ներից ավելի մոտ է կանգնած թերթի կազ-մակերպման ու պլանավորման հարցերին։

## ՅԵՐՐՈՐԴ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ

Յերրորդ պարապմունքի ժամանակ ուն-կընդիրներն անցնում են «Պատի թերթի խմբկոլը» գլխի մնացած մասը։ Զրույցի կենտրոնական թեման է՝ «Աշխատանք բանթղթակիցների (գյուղթղթակիցների) մեջ»։

Կոնսուլտանտի հիմնական խնդիրն է՝ պարզաբանել, թե ինչպես է ստեղծվում ու աճում թեղինակների ակտիվը։ Առանձնա-պես կարեվոր է, վոր դասընթացների ուն-կընդիրները գրույցի ընթացքում յուրաց-



նեն մասսաներում բոլշևիկ լրագրողի կա-տարած աշխատանքի վոճը։

Դրա համար կոնսուլտանտն ինքը պետք է ուշի-ուշով խորհի բրոշյուրի այն տեղերի վրա, վորտեղ ասված է, թե Լենինն ու Ստալինը ինչպես եյին համախմբում բան-վոր թղթակիցներին բոլշևիկյան թերթերի շուրջը, թե ինչպես պետք է կազմակերպել հանդիպումները սոցիալիստական շինարա-րության առանձին ճյուղերի աշխատողների հետ, ինչպես պետք է կարգի գցել բան-գյուղթղթակիցների աշխատանքը և այլն (բրոշյուրի 55—66 եջերը)։

Բրոշյուրի տեքստում հիշատակություններ կան Լենինի և Ստալինի մի քանի հոդված-ների մասին։ Կոնսուլտանտներին խորհուրդ ենք տալիս կարդալու հետևյալ հոդվածնե-րը՝ «Ինչի՞ց սկսել» (Լենին, Յերկերի ժողո-վածու, հատ. 4, եջ 107—113), «Նամակ ընկերներին» (Լենին, Յերկերի ժողովածու, հատ. 6, եջ 372—376), «Կուսակ-ցական կազմակերպություն և կուսակցա-կան գրականություն» (Լենին, Յերկերի ժո-

ղովածու, հատ. 8, եջ 386—390), Ստալին՝ «Պրավդա»-յի տասնամյակի առթիվ» «Բոլշևիստսկայա Պրավդա» ժողովածում, Կուսհրատ, 1937 թ., եջ 11—14), «Զրույց «Ռաբոչիյ Կորրեսպոնդենտ»-ի աշխատակցի հետ» (մամուլի մասին ժողովածուներում)։

Այն զրույցները, վորոնք տեղի յեն ունենում ունկնդիրների հետ բանթղթակիցների (գյուղթղթակիցների) մեջ կատարվելիք աշխատանքին վերաբերող թեմայի շուրջը, պետք ե սկսել նրանով, վոր լավագույն պատի թերթի խմբագիրը պատմում ե, թե այդ պատի թերթը ինչպես ե կազմակերպել իր շուրջը բանթղթակիցների (գյուղթղթակիցների) մեծ կոլեկտիվ: Ընդսմին պետք ե մանրամասնորեն նկարագրել այն մեթոդները, վորով մասսայական աշխատանք ե կատարել տվյալ թերթը։

Առանձին որինակներով պետք ե ցույց տալ, թե ինչպես մասսայական աշխատանքի բացակայությունը կամ թուլությունը կտրում ե թերթերը մասսաներից, չոր ու անգույն ե դարձնում թերթը։



Կոնսուլտանտը պետք ե պատմի, թե նա անձամբ ինչպես նոր հեղինակներ ե ներգրավում թերթին մասնակցելու: Թող նա նախապատրաստի յերկու-յերեք ստախանովական բանգյուղթղթակիցների յելույթը հետևյալ թեմայի շուրջը՝ ինչպես թղթակից են դարձել նրանք, ինչպես են ոգնել նրանց՝ թղթակցություն գրելու։

Զրույցը ունկնդիրներին պետք ե ոգնի պարզելու, թե վորքան կարևոր ե զգայուն և ուշադիր մոտեցում ցույց տալ այն մարդուն, վորին խմբկոլը ներգրավում ե թերթին աշխատակցելու։

Զրույցին պետք ե ներգրավել նաև խմբագրության մյուս աշխատակիցներին. Թող նրանք պատմեն թերթի համար նյութը կազմակերպելու իրենց փորձի մասին։

## ՉՈՐՐՈՐԴ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆ

Չորրորդ պարապմունքը պետք ե նվիրել այն հարցերին, վորոնք լուսաբանված են «Պատի թերթի խմբագրումը» գլխում։

Կոնսուլտանտը, կարդալով «Պատի թերթի խմբագրումը» գլուխը, նրա ամեն մի հիմնական դրույթի համար օրինակներ է ընտրում պատի թերթերից։

Այդ գլխում խոսվում է բոլշևիկյան թերթի համար նյութերը խմբագրելու հիմնական սկզբունքների մասին։ Կոնսուլտանտը պետք է, օրինակ, ունկնդիրներին պարզաբանի թերթի յուրաքանչյուր տողի բոլշևիկյան սկզբունքայնության հարցը, թերթում անփութությունը, վոչ հստակ, անխնամ աշխատանքն անթույլատրելի լինելու մասին։ Զինվելով հենց պատի թերթերից վերցրած օրինակներով, կոնսուլտանտը կկարողանա այդ գլխի դրույթները պարզաբանել առավելագույն պարզորոշությամբ ու լիակատարությամբ։ Կոնսուլտանտներին խորհուրդ ենք տալիս լուսաբանել այս դրույթը հետեվյալ աղբյուրներից վերցրած քաղվածքներով. Ն. Կ. Կրուպսկայա. «Լենինը կուսակցական մամուլի խմբագիր և կազմակերպիչ» (Կուսհրատ, 1931 թ.), «Բոլշևիստ-



սկայա պեչատ» և «Ռապոչե — կրեստյանսկիյ կորրեսպոնդենտ» ժուրնալների համապատասխան հոդվածները, մամուլի հարցերին վերաբերող և տեղական գրադարանում գտնվող գրքեր ու բրոշյուրներ։

Չորրորդ կոնսուլտացիան ունկնդիրներին պետք է սովորեցնի թերթը խմբագրելու հիմնական սկզբունքները: Այդ պատճառով դրույթը չպետք է մանրացնել բազմաթիվ հարցերով և, մասնավորապես, դրույթը չպետք է դարձնել հոդվածների կառուցման, դրանց ուղղման և այլն մանրամասն վերլուծում։ Հիմնականը, վորին պետք է հասնել, այն է, վոր ունկնդիրը դրույթի շընորհիվ խորապես հետաքրքրվի խմբագրման հարցերով և պատի թերթերում իր կատարելիք հետագա աշխատանքում գործադրի բրոշյուրի տված խորհուրդները՝ խընամքով խմբագրելու, փաստերը ստուգելու մասին, ձևակերպումների հստակության մասին և այլն։ Կարեվոր է, վոր դասընթացների ունկնդիրները սովորեն թերթի

համարում գլխավորն ավելի ցայտուն կեր-
պով շեշտել, կամպանիա մղել, ընտրել
նյութերն ըստ բաժինների, վերնագրերի,
ըստ հարցերի։

Հարկավ, միմիայն կոնսուլտացիան
անհրաժեշտ բոլոր արդյունքները չի տա։
Խմբագրությունը խմբկոլների մեջ իր կա-
տարելիք ամբողջ ընթացիկ աշխատանքում
պետք է գործադրի բրոշյուրում տրված ցու-
ցումները։

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բրոշյուրը պատասխան է տալիս լրագրի
աշխատանքի հիմնական կազմակերպական
այն հարցերին, վորոնք շատ են հետաքըր-
քըրում պատի թերթերի խմբագիրներին։
Ուստի կրկին նախազգուշացնում ենք, վոր
անհրաժեշտ է ամենալուրջ մոտեցում ցու-
ցաբերել այս բրոշյուրի համաձայն տեղի
ունենալիք կոնսուլտացիաներին։

Ամեն մի կոնսուլտացիա պետք է անց-



կացնել կենդանի ու հետաքրքիր զրույցի
ձևով, վորը նախաձեռնություն զարթեցնի
ունկնդիրների մեջ, ձգտում առաջացնի
պատի թերթի մակարդակը բարձրացնելու։

---

374.3+07.018

ՀՀ Ազգային գրադարան
NL0143968

2674
40

14907

ԶՐԻ

Курсы редакторов стенных газет и рабселькоров.

**МЕТОДИЧЕСКОЕ ПИСЬМО.**

Издание «Хорурдаин Айастан»
гор. Ереван—1940.